«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԻ

№1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ 2023 – 2024 ՈՒՍՏԱՐՎԱ Ի ԿԻՍԱՄՅԱԿԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023– 2024

« ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակում կազմակերպած աշխատանքների և խնդիրների մասին

2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակում դպրոցը աշխատանքներն իրականացրել է ՀՀ կրթության մասին օրենսդրության, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումների ու կարգադրությունների, ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանների պահանջների, ինչպես նաև դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրին համապատասխան: Աշխատանքները նպատակաուղղվել են ապահովելու կրթության որակի բարձրացմանը և համակարգի արդյունավետ գործունեությանը: Ուշադրություն է դարձվել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ չմոռանալով դաստիարակությունը: 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դպրոցում կոմպլեկտավորվել է 19 դասարան 393 աշակերտով՝ 230 տղա և 163 աղջիկ:

կիսամյակի ընթացքում եղել են տեղափոխվողներ և ընդունվողներ բայց կիսամյակի ավարտին աշակերտների թիվը մնացել է անփոփոխ՝ 393 աշակերտ:

2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում դպրոց են ընդունվել 11(տասնմեկ) աշակերտ՝

1) Փինաչյան Լիլիթ Վիգենի, 12-րդ դասարան, Հայաստանում եվրոպական քոլեջ հիմնադրամի 4-րդ կուրսից:12.06.2023թ.:
2) Քյարամյան Լիլիթ Արմենի,9-րդ դասարան, Ռուսաստանի Դաշնությունից: 18.09.2023թ.:
3) Քոչարյան Զարա Համիկի,1-ին դասարան, Արցախից բռնի տեղահանված:03.10.2023թ.:
4) Հարությունյան Բորիս Սուրենի, 3-րդ դասարան, Արցախից բռնի տեղահանված: 03.10.2023թ.:
5) Հարությունյան Արեն Սուրենի, 9-րդ դասարան, Արցախից բռնի տեղահանված: 03.10.2023թ.:
6) Հարությունյան Կարեն Սուրենի, 9-րդ դասարան, Արցախից բռնի տեղահանված: 03.10.2023թ.
7) Բազոյան Ալիկ Մանվելի, 10-րդ դասարան, Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոկեջի 1-ին կուրսից:20.11.2023թ.:
8) Խաչատրյան Թամարա Արտիկի, 1-ին դասարան, Զոլաքար գյուղի №2 միջնակարգ դպրոցից (Արցախից բռնի տեղահանված): 23.11.2023թ.:
9) Խաչատրյան Միլենա Արտիկի, 7-րդ դասարան, Զոլաքար գյուղի №2 միջնակարգ դպրոցից (Արցախից բռնի տեղահանված): 23.11.2023թ.:
10) Խաչատրյան Մարիանա Արտիկի, 9-րդ դասարան, Զոլաքար գյուղի №2 միջնակարգ դպրոցից (Արցախից բռնի տեղահանված): 23.11.2023թ.:
11) Ալոյան Արգամ Ահարոնի, 11-րդ դասարան, Վաղարշապատի №5 ավագ դպրոցից: 04.12.2023թ.:

1-ին կիսամյակի ընթացքում դպրոց են ընդունվել Արցախից բռնի տեղահանված 7 սովորողներ,որոնցից 3-ը Զոլաքարի №2 միջնակարգ դպրոցից:

Կիսամյակի ընթացքում դպրոցից ազատվել են 11(տասնմեկ) աշակերտներ.

1) Բաղդասարյան Հայկ Համլետի,10-րդ դասարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական քոլեջ:18.09.2023թ.:
2) Մուրադյան Արսեն Արտյոմի,10-րդ դասարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական քոլեջ:18.09.2023թ.:
3) Սաֆարյան Նորայր Սնակի,10-րդ դասարան, Ռուսաստանի Դաշնություն:04.10.2023թ.:
4) Փաշոյան Անդրե Օնիկի,10-րդ դասարան, Ռուսաստանի Դաշնություն:04.10.2023թ.:
5) Փինաչյան Արսեն Հովհաննեսի,4-րդ դասարան, Ռուսաստանի Դաշնություն:09.10.2023թ.:
6) Տոնոյան Մանե Բարսեղի,3-րդ դասարան, Նորամարգի միջնակարգ դպրոց:30.10.2023թ.:
7) Բավեյան Սեդրակ Ավետիքի,2-րդ դասարան, Ռուսաստանի Դաշնություն:03.11.2023թ.:
8) Քոչարյան Զարա Համիկի,1-ին դասարան, Մարտունու №2 հիմնական դպրոց: 20.11.2023թ.:
9) Հարությունյան Բորիս Սուրենի, 3-րդ դասարան, Վարդաձորի միջնակարգ դպրոց:07.12.2023թ.:
10) Պետրոսյան Ալեն Գրիգորի,5-րդ դասարան, Ռուսաստանի Դաշնություն: 07.12.2023թ.:
11) Պետրոսյան Միլենա Գրիգորի,7-րդ դասարան, Ռուսաստանի Դաշնություն: 07.12.2023թ.:

2023-2024 ուս. տարվա 1-ին կիսամյակի վերջում աշակերտների թիվը եղել է 393, որից տղա՝227(երկուհարյուր քսանյոթ) և աղջիկ՝166(մեկ հարյուր վաթսունվեց):

48(քառասունութ) առաջին դասարանցիներ և 35(երեսունհինգ) 2-րդ դասարանցիներ պայմանավորված հանրակրթության պետական չափորոշիչով չեն գնահատվել: Ընդհանուր չգնահատվողների թիվը կազմել է 83(ութսուներեք)աշակերտ: 310(երեք հարյուր տասը)սովորողներ գնահատվել են:12-րդ դասարանի 6(վեց) աշակերտներ դիմում են ներկայացրել մասնակցելու 2024 թվականի հունվար-փետրվար ամիսներին կայանալիք միասնական քննություններին:
2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակը դպրոցը գերազանցությամբ են ավարտել 62 աշակերտ,որից 27 տղա և 35 աղջիկ:Հարվածային՝ 104 աշակերտ,որից 45 տղա և 59 աղջիկ:Միջակ սովորողների թիվը 144 աշակերտ,որից 108 տղա և 36 աղջիկ:

Առաջադիմություն՝ 100%: Որակ՝ 53.7 % :

2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում համագործակցելով ԷՅ-ԹԻ-ՓԻ բարեգործական հիմնադրամի հետ դպրոցի տարածքում տնկվել են շուրջ 500 տարբեր տեսակի պտղատու և դեկորատիվ տնկիներ և ցրտերի պատճառով շուրջ 200 տնկի մնացել է տնկելու գարնանը:

2023 թվականի սեպտեմբերի 1-ից դպրոցում կիրառվել է ԿԳՄՍ նախարարի 02.12.2022 թվականի №79-Ն հրամանով սահմանված պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման նորմատիվները:

2023-2024 ուս.տարում դպրոցում աշխատել են 51 մարդ, որոնցից ուսուցիչներ՝ 26(քսանվեց) մարդ, վարչական և ուսումնաօժանդակ կազմը՝ 25(քսանհինգ) մարդ:

Կամավոր ատեստավորմանը մասնակցեցի 3 (երեք) ուսուցիչներ ֆիզիկա,գերմաներեն և ֆիզկուլտուրա առարկաներից: Ֆիզիկա առարկայի ուսուցիչը չհաղթահարեց 70%-ի շեմը իսկ մյուս երկու առարկաների ուսուցիչները անցան 70%-ի շեմը: Գերմաներենի ուսուցչուհի Մարիամ Միրզոյանը ստանում է 30% հավելավճար,իսկ ֆիզկուլտուրայի ուսուցիչ՝ Մակիչ Բզնունին ստանում է 40% հավելավճար:

Կիսամյակի ընթացքում դպրոցում աշխատանքի են ընդունվել Արցախից բռնի տեղահանված 1(մեկ) ուսուցչուհի Ալյոնա Խաչատրյանը,որը դպրոց է գործուղվել ԿԳՄՍ նախարարության կողմից և ստանում է 30% հավելավճար և աշխատանքի է ընդունվել 1 (մեկ) հավաքարար՝ Նաիրա Հարությունյանը: ԲՏՃՄ ոլորտի դասավանդող ուսուցիչներին վճարվել է հավելավճարներ:

Բոլոր աշխատողների աշխատավարձերը վճարվել է օրենքով սահմանված կարգով և ժամանակին:

2023 թվականի ընթացքում դպրոցը հայտ է ներկայացրել «Արմաթ» ինժեներական լաբորատորիա ունենալու համար և կարճ ժամանակամիջոցում ի շնորհիվ բարերարների,ծնողների և աշակերտների հավաքագրվեց անհրաժեշտ գումարը և 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում լաբորատորիան դպրոցում կունենանք:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել ջեռուցման ապահովման ուղղությամբ:

Դպրոցը 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում դասագրքերի,մեթոդական ձեռնարկների պակաս չի ունեցել:Պակաս է եղել 2-րդ,5-րդ և 7-րդ դասարանների դասագրքերը պայմանավորված ՀՊՉ-ի ներդրմամբ և նոր դասագրքերի տպագրությամբ,որոնք կիսամյակի ընթացքում տպագրվել և ուղարկվել են դպրոցներ բայց չտպագրված դասագրքեր մնացել են,որոնց ուսումնական նյութերը դպրոցում պատճենահանվել և բաժանվել են աշակերտներին: Մյուս պակաս դասագրքերը լրացվել է այլ դպրոցներից և նախատեսված դասագրքերի վարձավճարները հավաքագրվել և մուծվել է բանկ 100%-ով: 1-ին կիսամյակի ընթացքում կազմակերպված տարաբնույթ միջոցառումները նպատակաուղղվել են ոչ միայն սովորողների կրթության որակի ապահովմանը, այլև դաստիրակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Այսպես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումների համաձայն կազմակերպվել են՝

1) Անցկացվել են առարկայական օլիմպիադաներ և լավագույների անունները ներկայացվել են տարածքային փուլին մասնակցելու համար:

2) Աշխատանքներ են տարվել տնօրինության կողմից էլ ավելի ամրապնդելու ծնող- դպրոց կապը, մեծ ուշադրություն դարձնելով հատկապես էլեկտրոնային դասամատյանի վրա:

3) Դպրոցի կայքով լուսաբանվել է դպրոցի առօրյան բայց կայքէջի ոչ լիարժեք աշխատանքի պատճառով ոչ ամբողջական է լուսաբանվել:

4) Կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ նվիրված պետական և ազգային տոներին՝

ա) Անկախության 32-րդ տարելից:

բ) Ուսուցչի օր:

գ) Տարեմուտի միջոցառում:

Թեև մշտապես եղել է հետևողականություն,բայց այնուամենայնիվ կան որոշակի խնդիրներ,որոնք լուծման կարիք ունեն՝

1. լաբորատոր սարքավորումներով ու նյութերով ապահովումը,
2. մարզադահլիճի վերանորոգումը,որի մասին մշտապես բարձրաձայնվել է,
3. 2-րդ մասնաշենքի վերանորոգումը,որի մասին նույնպես բարձրաձայնվել է,
4. հանդիսությունների դահլիճի վերանորոգումը,
5. դպրոցի տարածքի ցանկապատում,
6. այլընտրանքային ֆինանսական միջոցների հայթաթում:

Վերոհիշյալ խնդիրները միշտ եղել են ուշադրության կենտրոնում,բայց լիարժեք լուծում չեն ստացել: Այս խնդիրների լուծման ուղղությամբ 2023-2024 ուսումնական տարում ցուցաբերվելու է առավել հետևողականություն:

Դպրոցի տնօրեն՝ Ա. Փինաչյան